

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀՀՀՀ

5

Ե. ՍՈՒՐԵՆ

ԶՂՁԱՑՈՂ
ՀԱՅ
ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՆ

Պ Պ
Պ

«ԶԱԿԱՆԻԳԱԼ»

1926

9(47.925)

5-84

3(47.325)
6-84

19 AUG 2006
05 SEP 2011

Ե. ՍՈՒՐԵՆ

ԶՂՋԱՑՈՂ
ՅԱՅԻ ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՆ

403

«Զ Ա Կ Կ Ն Ի Պ Ա»

Թ. Ի. Վ. Ա. - 1926

ՀՀՀՀ

Е. СУРЕН
КАЮЩАЯСЯ АРМЯНСКАЯ ИНТЕЛЛИГЕНЦИЯ

ՀԱԼԻՈՒՅՅԱՆԻ ՄՏՈՐՈՒՄՆԵՐԻՑ

I.

Բուժմանիտյի մայրաքաղաք Բուքրեշում ներկա թվի ապրիլին հմբգընուն հայտնի Գր. Զալիխուշյանը գրել և մի բրոշյուր հետեւալ վերնագրով.—


«Ե՞նչ եր յեվ ի՞նչ պիտի լինի մեր ուղին»:

Բրոշյուրի յերես 43-ում հեղինակը նկարագրում է հետեւալ սրտաճմլիկ «հայրինասիրական» տեսարանը.

«Պուքրեշի յեկեղեցուն մեջ մանկական հանդես մը եր զարդարնանց պատերազմի տարեղարձի առթիվ։ Բեմ յելան յերկու փոքր մանուկներ, վոր մասին դժվար թե 20 տարի ունենային։ Բռունցքները բարձրացնելով յերկինք, վուները զարնելով հատակին, մեկը կը պոռար՝ «Ասար յերկինն, ոսար եռպ» ու ասածներուն մեջ կաշխատեր դնել բուռն զզվանք, թույն, լեզի. իսկ մեկալը՝ «Հայ եմ, յես հայ եմ» կը պոռար ու կը խոստանար զարնել աջ ու ձախ հանուն հայրենիքի աղաւառության։ Մինչդեռ հասարակությունը կը ծափահարեր և կը քաջալերեր, յես կը արտմեյի ու խոր մտածունքի մեջ կարծես մեր բոլոր սխալ անցյալը կը տեսնեյի»։

Նա ցնցված է այս և նման տեսարաններից, — վորոնց այլ նըմուշներ ևս տալիս ե իր գրքույկում, — ինչպես նաև հիսութափված լոգանի կոնֆերանսի արգյունքներից, վորի մասին նաև արտահայտվում է այսպիսի անհարգանքով. —

«Լոզանի խորհրդաժողովը մեզմե շատ շատերուն հուսահատեցրեց. բոլոր հայ թերթերը սկսան շանթեր արձակել Ձրանսայի, Անգլիայի և Իտալիայի դեմ, մերկացնելով ա-



նոնց ստոր շահախնդրությունները և մենք այսուր ընկճված, կը հայնոյենք բոլոր անոնց, վորոնց ձեռքերը դեռ յերեկ կը համբուրեցինք, վորոնցմեն գեռ յերեկ մեր փրկությունը կը սպասելինք...»:

Զալիսուշյանը փորձում է իր բրոշյուրի մեջ քննության առնել յերկու կարևոր խնդիր. —

Նախ՝ վորոնք են այն սխանները, վոր բերին զաշնակցական Հայաստանը իր բնական վախճանին.

ապա՝ վերն և լինելու այսուհետեւ այն վարքագիծը, վորին պետք և հետեւն նրանք, այսինքն այն բոլոր բաւկերը, վորոնք յերեկ մտածում ելին Զալիսուշյանի հման և գեմ են յեղել Խորհրդային որինստացիային, կոմմունիստական Ռուսաստանին:

Մենք այդ կարգով ել կը ծանոթանանք Զալիսուշյանի մրտքերի հետ:

Իր գրքի սկզբում Զալիսուշյանը հիշեցնում է Լոզանի կոնֆերանսից չափազանց դժողովներին, թե Անդանուը Լոզանում չե, վոր լուց հայ ժողովուրդը: Այդ լրումը կատարվել է շատ վաղուց, իսկ մենք սիրով կասինք՝ միշտ և ամեն պարագային: Բայց լունք Զալիսուշյանին. —

«Մեզ լրեցին, կըսենք: Սակայն միթե կոզանի խորհրդագովովին մեջն եր, վոր մեզ լրեցին: Մեզ լրեր ելին շատունց, միայն իրողություննը չելինք ուզեր զիսնալ, տարված ելինք՝ ինչպես միշտ՝ յերազներով, հույզերով, ինքնախարելությամբ»:

Զգաստ դիտողություն, վորից—պետք և հուսալ—հորիսավոր յերբագցությունները կանեն նրա ունկնդիրները, համենայն դեպք ինքը Զալիսուշյանը խոսանում է վոչ միայն անել, այլև խորհուրդ և տալիս ուրիշներին. —

«Համենար, վոր ուրիշ անդամ ալ հորեն չքայինք սիսալ ճամբարի...»:

Զալիսուշյանը կամավորական (Դենիկինի) բանակի մոտ զաշնակցական կառավարության ներկայացուցիչն և յեղել: Նա մոտից հնամեկ և ինչպես ուսուական, նույնպես և հայկական հականողափախության Ռուսավում և Յերեանում: Ռենի կատարած բարվական հարուստ զիտովություններ, վորոնցից առատ նմուշներ հաղորդում և իր բրոշյուրում:

Դաշնակցական և միջազգային և այսուղի ինտելիգենտական

թափթփուկները սիրում են իրենց անանկության արդարացումը պատճառաբանել «որյեկտիվ» տվյալներով: Զալիսուշյանը մի շարք փաստերով ցույց է տալիս, վոր պակաս ներգործական գեր չե խաղացել Դաշնակցության սուրյեկտիվ աղիկարությունը:

1920 թվի հունվարից մինչև նոյեմբեր Զալիսուշյանն ապրել է Յերևանում, ուր յեկած եր ներկայացուցչական գործերով: Նա վոտք և զնում Հայաստանի մայրաքաղաքը «վառ զգացմունքներով»: Բայց Ստ. Մամիկոնյանը նրան նախազգուշացնում է. —

— «Փրիգոր, պիտի հիմաթափվես...»:

Յեվ աստիճանաբար այդ հիմաթափությունը տիրում է նըրան, մինչև վոր վերջնականակես բռնկվում է Բուքրեշում:

Զալիսուշյանը խոստովանում է, վոր ժողովուրդը պահվում եր անեղյակ և վոր նույնիսկ ինքը—Դաշնակցության պետական բարձր շրջաններին այնքան մոտ մեկը—

«միշտ անտեղյակ ելինք անցքերի իրադարձին և շատ բաներ գգրախտաբար մենք իմացանք շատ ուշ... Պուքրեշ...»:

Բրոշյուրի մեջ կա հետեւյալ զլումիը. —

«Հայաստանի հանրապետության անկումի իսկական պատճանները»:

Դաշնակցական Հայաստանի անկման պատճառները աչքի անցնելիս, նա խոսում է մեր յեկըրի—

— աշխարհագրական զրության և զրացիների,

— անտեսության,

— Հայաստանի բնակչության,

— բանակի,

— Բեյուք-Վեզիր,

— զաշնակցական կառավարության

և այլ շատ խնդիրների մասին:

Մենք կը փորձենք վորքան կարել յե համառոտակի ամփոփել այդ խնդիրների առթիվ Զալիսուշյանի արած զիտությունները:

Դաշնակցական Հայաստանի աշխարհագրական զրությունը աննպաստ եր, բայց այդ աննպաստությունը շեշտվում եր դաշնակների և մենշեկելյան Վրաստանի ու մուսավաթական Ադրբեյջանի հետ սուղծված փոխարարերության շնորհիվ: Ադրբեյջանը նավթ չեր ուզում տալ Դաշնակցությանը, Վրաստանը՝ թույլատրել ոգովել Բաթումից և հացանատիկներ ստանալ ծովով, Կա-

մավորական բանակը և հատկապես զեներալ Վայողեմոկին չեր ուշում նույնիսկ գրամով թույլատրել Հայաստան ալյուր ուղարկել յեր Անտանտը անարգել կրում եր Ռուսաստանի հարավից ալյուր ու ցորեն.—

«Կամավորական բանակը միշտ մեզ անբարյացակամ եր: Բանակն եր, վոր քանից մերժեց հացահատիկ դրկել սովոր Հայաստանին գրամով անգամ»:

Ըստգծումը՝ «գրամով անգամ» Գր. Զալիսուշյանին և Ուրեմն այստեղ, վորտեղ կարելի յեր և պետք եր մեղմել աշխարհագրական որյեկտիվ աննպաստ պայմանները, դաշնակցական իշխանությունը, ընդհակառակը, սրում եր փոխհարարերությունները շրջապատող ժողովուրդների հետ այստես, վոր Հայաստանը մեկուսանում եր, միանգամայն կղզիանում:

Յերկրի տնտեսական ուսուրաների հանդեպ ևս դաշնակցական կառավարության տկարությունն ու անկարողությունը ակներե եր Զալիսուշյանի համար.—

«Մեր յերկրի հարստությունները՝ բամբակը, բրինձը ու խաղողը ալ չկային: Առաջինը անհետացավ մենաշնորհի վախեն, վերջին՝ շնորհիվ աշխատող ձեռքերու պակասության և թանգության»:

Հ՞նչպես կարող եր գուրս գալ յերկրը—ըստ Զալիսուշյանի —այդ գրությունից. —արտաքին փոխառությամբ, վորի անաջող փորձն արավ Դաշնակցությունը հայ գաղութներում, կամ ոսար պետության ոժանդակությամբ, այսինքն՝ ավելացնում և Զալիսուշյանը—

«այն լայն ոգնության, վոր վերջերս Խորհրդային Ռուսաստանը ցույց տվավ...»:

Բայց դաշնակցական կառավարությունը ահա թե ում ձեռող և ինչպես եր վարում աղքատիկ յերկրի տնտեսությունը: Յերես 28-ում Զալիսուշյանը նկատում է. —

«Ծնորհիվ Ռուրեն Տեր-Մինասյանի՝ անոր յեղայրը, վոր մեր Բաթումի առևտրական ներկայացուցիչն եր, անպատիժ կը կողոպտեր մեր գանձարանը: Մեր Բաթումի հյուպատոսը ինձ ցուցուցեր եր յերկու գործեր՝ վոր պարսներկայացուցիչը կը յուրացներ իր աղքատ հայրենիքի ինչքերը»:

«Փաշայի» յեղբայր Տեր-Մինասյանի և մինիստր Արարա-

տյանի կոմբինացիաների մասին իր ժամանակին բավական գրվել ե: Անցնենք ազգաբնակության տրամադրության:

Ի՞նչպես եր վերաբերվում հայ աշխատավորությունը դաշնակցական իշխանությանը: Ահա Զալիսուշյանի վկայությունը.

«Գյուղացիությունը անտարբեր եր հանդեպ պետության, չեր ուզեր տալ վոչ տուրք, վոչ զինվոր: Ռուսահայերը ընդհանուր առումով չեյին հավատար նոր պետության: Մասպորականներու և մնացյալ ժողովրդին միջն չկար սերտ, անխզելի ամուր կապ: Չեյին հասկնար զիրար»:

Շատ ավելի անմիտթար գույններով են կարաբրում Զալիսուշյանը դաշնակցական բանակի գրությունը: Նա չուներ հարազադեկավարներ, սպայությունը հրում եր զինվորությանը գողության ու թալանի և ինքը առյուծի բաժինը խլում. իսկ խմբապետությունը բարոյալքումն եր առաջ բերում.

«Նազարբեկով, Գամազով, Ախմետով, Ախմետով, Վերիլով այլասերգած եյին, չգիտեյին հայերեն լեզուն, պատմությունը, իրականությունը: Կարծես ակամա յեկեր եյին, ակամա կը ծառայեյին, հարմար տոփթ մը փնտռելով, վոր հեռանան մեղմե: Արդեն կընդունեյին, վոր մեր հանրապետությունը անցողական շրջան մ'ե և կը սպասեյին, վոր այսոր կամ վաղը կամավորական բանակը պիտի գա և տիրե յերկրին: Շնորհիվ Դրո, Սեպուհ և Ռուբեն խմբապետներուն, յերկրին: Շնորհիվ Դրո, Սեպուհ և Ռուբեն առաջին հերթին ավելի շուտ բավարակառավարությունը առաջին հերթին առաջին հերթին ավելի շուտ բավարարություն կը տար խումբերու կարիքներուն: Ահա ինչու խումբերու և կանոնավոր զորքերու մեջ կային մրցում, նախանձ, անբավականություն, փոխադարձ ատելություն: Կամավորները առաջ բերին՝ թալան, մասուղերություն և կարգապահության անկում»:

Խոսելով բանակի մասին, Զալիսուշյանը հիշատակում ե իր զրբում մի փոքրիկ եպիզոդ, վոր ճշգրտորեն բնորոշում ե դաշնակցական գեներալիտետի հոգերանությունը: Անգլիական ներկայացուցիչ Ստորսի պատվին տված ճաշին՝ գեներալ Նազարբեկայացուցիչը գովը ինդրում ե Զալիսուշյանից ածել իրեն Շուստովի կոնյտից. —

— «Շուստով» չկա, ըսի ծիծաղելով, կառաջարկեմ «Արարատը»:

— «Շուստովը»—պատասխանեց Նազարբեկով արդեն Սոչի յե»:

Այդ այն ժամանակներն ելին—նկատում ե հեղինակը—յերբ կամավորականները գրավել ելին Սևծովյան շրջանը։ Պակաս շացասական չե Զալխուշյանի վերաբերմունքը դեպի դաշնակցական սպայությունը։

«Հասարակ սպաներու մեջ կային 7—10 հոգի պատրաստված, անձնվեր պաշտոնյաներ։ Մեծամասնությունը ուռւս (ցարական) բանակի թափթփուկներ ելին։ Անոնց և զինվորներու մեջ կապ չկար։ Ծեծ, ապտակ, հայհոյանք, անշվայել վերաբերմունք՝ սովորական յերեսությունը ելին սպաներու համար։ Սպաները ժողովրդի հանդեպ ալ իրենց կը պահեյին վատ։ Կը պատահեր և այնպես, վոր սպաները կուղարկեյին թալանի զինվորներու և կը պատվիրեյին, վոր իրենց բերեն այսինչ, այնինչ իրերը։ Այսպիսով հետզհետե զինվորները կորցրած ելին իրենց հարգանքը գեպի սպաները ու ընտելացած ելին կողովուտի։ Յերեկոները մենք միշտ կը լսեյինք բերդի պահակներու յերաժշաությունը։ Այդ կը նշանակեր, վոր զինվորները իր տեղերն են, հանգիստ կը նեն... Սակայն միենույն զինվորները, անդամ սպաներու ընկերակցությամբ, Յերեանի շրջակայքերու մոտ կը թալանեյին գյուղացիներին, վոր սայլերով կը բերեյին քաղաք ձմերուկ, սեխ, բանջարեղեն, մրգեր։

Զալխուշյանը կանգ ե առնում թեյուք-վեդիի և Զանդի-Բասարի գրավումի վրա, վոր նա համարում ե դաշնակցական հանրապետության վախճանի սկիզբը։ Այդ ճշմարտությունները մեզ բոլորիս բավական ծանոթ են։

Խոսելով բանակի մասին, Զալխուշյանը չի մոռանում հիշելու նույնպես դաշնակցական բանակի «զարդ», Յերեանի կոմենդանտ դերասան Շահխաթունուն, վորի համար—

— «պ. Խատիսյան Հունաստանեն բերավ բարձր շքանշան՝ իրը ամենաարժանագոր հայ սպայի...»։

Զալխուշյանը նկատում ե, վոր դաշնակցական Հայաստանը— «անզիւական զորավարի կարծիքով, չուներ զորք, այլ հորդա», «բանդա»։

Դաշնակցական կառավարությունից ստացած տպավորությունների մեջ կան շատ բնորոշիչ կտորներ։

«Պարոն Խատիսյան, Ոհանջանյան, Գյուլխանդանյան, Արարատյան, Զամալյան և այլն հայախոս ուսարեւ ելին,

վոր հայ պետության հիմքը չելին կարող կազմել։ Լայն ըմբռնած մտքով ազգ գոյություն չուներ Հայաստանին մեջ։ Բոլորը հրաշք կը սպասեյին, միայն հրաշքը կարող եր փըրկել։ Այդպիսի տալավորություն թողին վրաս կառավարչական բոլոր շրջանները, վորոնց մեջ չելին նկատվեր յեռանդ, հավատ, աշխատանք. պարզ բարոյալքում եր, վոր կը տիրեր ամեն սրտերուն։ Յելք չեր յերեար»։

Այնուհետև Զալխուշյանը պատմում ե, վոր կառավարության գլուխ անցած մարդիկ չափաղանց միջակ պատրաստությունների ու կարողությունների տեր մարդիկ ելին, վորոնք բնականաբար անընդունակ ելին «իրական, կենդանի, հարկավոր աշխատանքի»։

Առանձնակես բացասաբար և արտահայտվում հեղինակը հայտնի Ալեքսանդր Խատիսյանի մասին, վոր մեր մեշշանականության յերբեմնի կուռքն եր—

«Յեկ ինչքան մոտիկեն կուսումնասիրեյի պարոն Ալ. Խատիսյան, այնքան զժբախտաբար կը համոզվեյի, վոր այդ յեռանդուտ, գործունյամ մարդը պետական իմաստով Փայլուն վոչնչություն մ'եր, տարված միակ ցանկությունով—մնալ նախարարական պաշտոնին մեջ»։

Զալխուշյանը հիշում ե, թե ինչպես ամեն մի փոքր ի շատն լուրջ խնդրի լուծման համար անհրաժեշտ եր նախապես Անտանատի ներկայացուցիչների հաճությունը առնել։ Այսպես՝ գաշնակցական իշխանության Թօնի ներկայացուցիչը պատմում ե, թե—

«Ինձ պետք եր լիազորություններ ստանալ նորեն մուսատան վերաբանալու համար։ Վարչապետ պ. Խատիսյան կարեց խոսքս սա բացականչությունով».

— «Անզիւան ինչ պիտի ըսե»...
Զի մոռանում Զալխուշյանը իր գրքում դաշնակցական չարաբաստիկ լիազորին և իր զայրույթն ե հայտնում, վոր գոնե-

«մելին կառավարությունը կախած կամ զնտակահարած ըլլար»։

Այդ ամբողջ նախադասությունը ընդգծած ե հեղինակը իր բըռշյուրում։

Ահա մի քանի խոսքով այն պատկերը, վոր՝ վորպես ականատես՝ Գր. Զալխուշյանը տալիս ե իր գրքույկում և վոր մեզ բոլորիս նույնպես մոտից հիմնավորապես ծանոթ ե։

Թվելով դաշնակցական իշխանության սխալները, նա յեղ-

բակացնում ե (յերես 29), վոր ապիկարների կառավարության առաջ դրված յերեք մեծ խնդիրներից—տնտեսական, գինվորական և ազգերի համերաշխության—վոչ մեկը լուծել չկարողացավ հակախորհրդային դաշնակ Հայաստանը և վոր այդպիսի հանրապետությունը դատապարտված եր պատմությունից և վոչինչ չեր կարող նրան փրկել:

Բայց—համենայն դեպս—կարո՞ղ եր արդյոք դաշնակցական կառավարությունը փրկել դրությունը,—հարց ե տալիս ինքն իրեն Զալիսուշյանը և պատասխանում.—

«Այս, կարող եր: Պետական դեկն իր ձեռքն եր: Ան գիտեր արդեն, վոր Ամերիկան մեր մանական չեր ընդուներ, վոր Յեվրոպային սպասելու բան չունինք: Պետք եր դաշնակցականներուն ունենալ հարկավոր ազնվությունը և հայրենասիրությունը—զիջել իրենց տեղերը կամավոր, առանց կովի և արյուննեղության՝ մեծամասնականներուն: Տեղի չեր ունենար անպետք քաղաքացիական արյունահեղ կորիվը: Դաշնակցականները գերազանցին իրենց անձնական շահերը: Յեկ մենք ունեցանք այնքան ավելորդ զոհերը»:
Զի սխալում Զալիսուշյանը, յերբ նա իր ամրող բրոշուրում համառ կերպով պնդում ե, թե «որյեկտիվ պայմանները» ավելի պակաս գեր են խաղացել հայ ժողովրդի դժբախտությունների մեջ, քան «սուրյեկտիվ պայմանները», վորոնց հեղինակության պատիվը բացառապես պատկանում եր մեր հայտնի քաղաքական լոպազներին:

Շատ ավելի ուշագրավ ե Զալիսուշյանի դրած յերկրորդ հարցը.—

— Վա՞րն ե լինելու այսուհետեւ մեր, այսինքն յերեկ Զալիսուշյանների նման մտածողների այսորվան ուղին:

II.

Մեր ուղին հարցին Գր. Զալիսուշյանը տալիս ե բավական հետաքրքրական պատասխաններ:

Նախ նա այն հիմնական միտքն ե հայտնում, վոր ընդմիշտ պետք ե յերես գարնենել Յեվրոպայից և այսուհետեւ հարել Թուսասահին, վորը միայն կարող ե ապահովել հայ ժողովրդի կուլտուրական զարգացման պայմանները.—

«Միայն Ուսուսաստանի գրկին մեջ մենք հսար ունենք ապահով բազմանալ զարգանալ և բարորության հասնիլ»:

Կարող ե թվալ, թե Զալիսուշյանը, ինչպես մեր շատ կազետներ ու դաշնակներ, պարզապես հիսութափված Յեվրոպայից, մասնավանդ լոզանի կոնֆերենցիայի արդյունքներից, հարում և ուսուսական որիենտացիային անկախ նրանից, թե իշխանության դեկը վնր գասակարգի ներկայացուցիչների ձեռքին ե: Այդ գեղարում, ի հարկե, այդ խոստովանության ու հիսութափության արժեքը այնքան ել մեծ չեր լինի:

Հենց նորերս այդպիսի մի միտք եր հայտնված կադետուգաշնակ հայտնի Ալ. Խատիսյանի նամակում, վոր տպվեց մի քանի որ առաջ «Զարյա Վոստոկա»-յում և ուր ի տեր հանգույցալ գաշնակցական կառավարության նախկին վարչապետը շտագում եր իր ամենածառայական հավատարմության զգացմունքները հայտնաբերել Ծուսաստանի հանդեպ՝ առանց «մանրամանությունների» մեջ մտնելու լինելու յե այդ Ծուսաստանը միապետական թե հանրապետական, Դենիկինյան թե Լենինական: Խտիսյանական հայտնի «Ճկունություն»...

Բայց վորքան կարելի յե դատել ներկա բրոշյուրում արտահայտած մտքերից՝ Զալիսուշյանը կուցը ուսուՓիլ չե և վոչ ել ամեն պարագայում ուսուսական որիենտացիայի կողմեակից: Յեթե նա Յեվրոպային գերադասում ե Ծուսաստանը, ապա առում ե նաև թե ինչու: Զալիսուշյանը պարզ շեշտում ե իր հակարանքն ու համակրանքը և տարբերում խորհրդային ու կամտ-

Վորական Ծուսաստանները: Կամավորական բանակի հաղթանակը նա վորակում է վորպես հայ ժողովրդի վերջնական պարտություն։ —

«Մենք կամավորական բանակն զոչինչ չունինք սպանելու։ Սեռ վերջնական հաղթանակը մեր վերջնական պարտությունը պիտի ըլլար։ Մեզ ամեն զնով պետք էր Խորհրդային Ծուսաստանի կողքին կանգնիլ ու համակերպվիր քանի վոր անոր միջոցով կարող պիտի ըլլանե պահպանել մեր անկախությունը։»

Չուփուշյանի ընտրությունը հոգուա Խորհրդային Ծուսաստանի հարկադրական չե, այսինքն՝ հետևանք չե այն բանի, վոր հրապարակում չկա մի չերութ «խելոք Ծուսաստան», վորին կարողանար նա հարել։ Յեվ սխալ է կարծել, թե, յեթե, որինսկ՝ հայ սովորական նույնիսկ զրամով ալյուր չտվող Դենիկին-վրանգելների փոխարեն նստած լինելին ավելի «գիտակ ու հեռատես» հայտնի քաղաքագետներ, նա կընտրել այդ հոսանքը, չեր հարի Խորհրդային Սոցիալիստական Ծուսաստանին։

Մեր շատ խոհեմ մտավորականների համար, — նրանց՝ վորոնք յերեկվա Գր. Չալխուշյանի պես ելին մտածում — կադետ Միլյուկովը պակաս խելքի ու կարճատես քաղաքագետի պաշտպանի մարդ չե։ Ի՞նչ կասեր զրքույկի հեղինակը, կադետ Միլյուկովի յերեկվա այդ յերեկագուն ու հայ զինակիցը, յեթե Դենիկինի փոխարեն Միլյուկովը նստած լիներ։ Արդյոք վերջինս ավելի վստահություն կը ներշնչեր նրան։ Բնավ յերբեք։ —

«Վաղը յեթե Միլյուկովները նստեն կառավարության աթոռներուն վրա, Հայաստանը պարզ ծայրագավառ մը պիտի ըլլա, լիված, մոռացված, ինչպես առաջ։»

Յեվ այստեղից շատ հետեղական ու ճիշտ յեզրակացություն և հանում Չալխուշյանը, վոր Հայաստանի անկախությունը պայմանավորված է սոցիալիստների «Ծուսաստանին տեր ու տնօրեն» միալով։

Այստեղից ծագում է և նրա մյուս յեզրակացությունը, թե՝ ամեն մի հայ քաղաքացու, մանավանդ «հայրենասերի» —

«Վոր իր ժողովրդի ապագան և բաղզը կը զերազան իր անձնական հակումներուն և նյութականին, պարզ պիտի ըլլա, վոր Ծուսաստանի սոցիալիստական կարգական համար արվում էն կենարունից — Կարմիր Մասկայից այնպիսի գոհովություններ, վոր վոչ մի կերպով չեր կարելի յերեակայել այլ կարգերում, քան խորհրդային, ուր Հան կախյալ և առկախ մնացած դրություններ, այլ տարրեր լիզուների, բայց նույն գառակարդի յեզրայրական հավասարությունից և շահերի նույնությունից բրիով փոխարարերություններ։

Այսուրբյան մեջն և իր հայրենիքի փրկությունը և վոր հանցանք մ' անոր զեմ կռվիլը։

Չալխուշյանը նախատում է մեր պատրիոտներին, թե հայրենասիրությունը չի նշանակում սեր զեպի ամայացած «Ճորերը, զաշտերը, արտերը», վոր յերգում են մեր շատ բանաստեղծներ, այլ և սեր զեպի ժողովրդը», և ընդգծում է թե

«հանուն այդ ժողովրդի սիրուն բնավ չենք համար այն ծայրահեղներուն, վոր կը քարկոծեն մեր մեծամասնականներուն, վորովհետեւ անոնք համոզվեր են, վոր մենք մեր քաղաքականությունը, մեր զորքերը անկախ չունինք, այլ մեր ներքին գործերուն մեջ պահպանելով մեր բոլոր պատությունը, վոր կը տա լիուլի կարելիթյուն զարգացնել մեր ազգային մշակույթը, արտաքին գործերուն յերկրի պաշտպանության հարցերու շուրջը՝ կախում ունենանք Ծուսաստանին։ Մենք կողջունենք սա վորոշումը»։

Իրերի այս պատկերացումի մեջ Չալխուշյանը թույլ է տալիս իրեն մի վորոշ անձշտություն, վոր անշուշտ հետևանք և յերկրից հեռու եմիզրացիում տարիներ լինելուն։ Նրա նկարագրությունից մեր իրավակարպին անձանոթ ընթերցողի մեկը կարող է կարծել, թե այստեղ՝ Խորհրդային Ֆեդերացիայում կան հակազիր կողմեր, վոր Խորհրդային Ծուսաստանը մի կողմն և և Խորհրդային Հայաստանը կամ մի այլ հանրապետություն մյուս կողմը, և նրանց մեջ կա կախման վիճակ և վոչ թե օտիենի ընդհանրություն։ Այդպիսի պատկերացումը սխալ է։ Նման դրություն զոյլություն չունի Խորհրդային Ֆեդերացիայում, և բավական և աշքի անցնել նրա հիմնական որենքները, ինչպես նաև գիտել մեր ամենուն պրակտիկան, վորպեսզի համոզվենք, թե համախ մի փոքրիկ Հայաստանի կամ Վրաստանի համար արվում են կենարունից — Կարմիր Մասկայից այնպիսի գոհովություններ, վոր վոչ մի կերպով չեր կարելի յերեակայել այլ կարգերում, քան խորհրդային, ուր Հան կախյալ և առկախ մնացած դրություններ, այլ տարրեր լիզուների, բայց նույն գառակարդի յեզրայրական հավասարությունից և շահերի նույնությունից բրիով փոխարարերություններ։

Այս այստեղ լինելով, չի կարելի չհամաձայնել Չալխուշյանի հետ, վոր զաշտակական մեկուսացած Հայաստանի —

«ամենամեծ սխալը անոր մեջ եր, վոր մենք փոխ ազգ

թլալով, մեծ հաղաբականություն կուզեյինք ընել յեվ ան պատիկ մարդկանց ձեռքով»:

Չալխուշյանն իր ըրուցյուրի մեջ գիտակցում և նաև Անդըր-կովկասի հանրապետության կարեռությունը, վոր ընդմիշտ լուծում և մեր յերկրի յերեք գլխավոր ազգությունների փոխհարաբերության խնդիրը.

«Ազգերու համերաշխության խնդիրը մեզ համար ստիպողական է: Պետք ե վոր մենք և զրացիներս զիրար ճանաչնք, հասկանանք, վոր սիրենք և հարգենք: Հայը, վրացին, մուսուլմանը այժմ՝ ձեռք-ձեռքի տված, կուշտ-կուշտի պիտի պաշտպանեն ընդհանուր հայրենիքը: Անդրկովկասյան հանրապետությունը մեր յերազն եր, վոր այսոր կիրականանա ամենափայլուն կերպով, շնորհիվ և միջնորդությամբ Խորհրդային Ռուսաստանի և անոր իրեն անբաժան մասն»:

Առանձնապես ուշադրով և այն պարագան, վոր Չալխուշյանը վերագնահատության և յենթարկում հայկական իրականության ամբողջ մինչ-Հոկտեմբերյան հեղափոխության, մեր կես գարվա տիրապետող իգեսովքիան: Նա գատապարտում է «մեր մաքերու և սրտերու կուռքերը»—Բաֆֆին, Գամառ-Քաթիպային և Արծրունուն: Նա գտնում է, վոր հայ մատադ սերնդի սիրտն ու միտքը թունավորվել են և դեռ այսոր ել շարունակում են թունավորվել արտասահմանյան հայ գաղութներում «Վարդանանց տոների» հեռանկարներով և Բաֆֆի-Քաթիպայական շովին «Լուսավորությամբ»: Նա պահանջում է իր նման հին գործիչներից ճշտել իրենց վարքագիծը, պատմական հսկա անցքերից վերջապես հարկավոր դասն առնել:—

«Պետք ե սա պատմական անցքերին դաս մը առնել: Մեզ՝ ճին գործիչներում՝ այսոր պետք ե ճշտել մեր ըրածները: Պետք ե քննադատական վերաբերմունք զեպի մեր մաքերու և սրտերու կուռքերը՝ Բաֆֆին, Գամառ-Քաթիպան և Արծրունին: Տաք զլուխները կաշխատեն իրականացնել Բաֆֆիի յերազները և հերյաթները: Արծրունին տարգանձեր Յեվրոպայի հեղինակության փայլով և լուրջ կը կարծեր, վոր հայերու ցույցերը Պոլս մեջ պիտի փրկեն Հայաստանը, վորովհետեւ պիտի ցնցեն Յեվրոպայի հասարական կարծիքը»:

Չալխուշյանն այսպիսի անողոք ինքնամարակման յենթարկելով այն կուռքերը, վոր մշակական ու դաշնակ հոսանքների կուռքերն են յեղել շատ տամայակ տարիներ, վորոնց յերեկ յերկը պազել ե նաև ինքը «հայրենաստիրական» մեծ պերճախոսությամբ, մելանխոլիկ կերպով վերջացնում ե:

«Ճշմարիտ լուսավորության մեջն և մեր փրկությունը»...

Չմոռանանք ասել, վոր զրքի վերջին յերեսներում (42 և այլն) հեղինակը կոչ է անում ամեն զոհողության՝ Խորհրդային Հայաստանի ծով կարիքների հանդեպ:—

«Պետք են մեր կողմեն զոհողություններ: Սակայն ինչ ըբեր ենք մինչև այսոր: Խոստովանենք, վոր չնշին փշուանքներն են, վոր անկարող են հագեցնել Հայաստանի աղաղակող կարիքները: Պետք ե ավելի լայն, ավելի շոշափելի ոգնություն»:

Ահա այն մտքերը, վոր մենք գտանք Նաումճեյից մեր «Մարտակոչ»-ին ուղարկած Չալխուշյանի գրքույկում:

III.

Գր. Զալիսուշյանի «Ե՞նչ եւ յեզ ի՞նչ պիտի լինի մեր ուղին» բրոշյուրին չի կարելի մոռենալ զորպես պատահական ու աննկատ մի յերեւյթի, ևմիզրանտական ձանձրալի մթնոլորտի սոսի արգասիքի:

Ուստական հակառեղափոխական եմիզրացիայի մեջ մի շարք պատճառների հետեանքով կատարվում է խոր խմորում, առաջ և յեկել ուժեղ բեկում, նկատելի լուրջ ձեղքվածք: Խորհրդային կարգերի ամեն մի ուշիմ հակառակորդ բավական ժամանակ ուներ հեղափոխական լարված մթնոլորտից հեռու, առանձնացած ստար յերկնակամարի խաղաղ խցերում, վերագնաճառության յենթարկելու այն՝ ինչպես ասում է Զալիսուշյանը՝ կուռքերը, վորոնց նա ինքարիկի և, նորից սառն քննության առնելու պայքարի բոպեներին հապճեղ գիտածը և վորոշածը:

Մենք գիտենք, վոր ուստական մտավորականության գիտական-գրական-հասարակական լավագույն ուժերը աստիճանաբար զգաստանում են, հրաժարվում իրենց եմիզրանտական մտորումներից: Նրանցից շատերը զգացին նույնիսկ «խղճի խայթ», վոր բարձի ինը արել ժողովուրդը, յերբ վերջինս կուլտուրական ուժերի այնպիսի մեծ կարիք ունի, յերբ բացվում է նրանց զործունեցության առաջ այնպիսի ասպարեզ՝ ինչպես յերբեք: Նրանցից շատերը շատեցին Խորհրդային Ռուսաստանի արդին մասնակցում են յերկրի շինարար աշխատանքներին, վերածնության: Ինչպես զիտենք, այդ եմիզրանտական զուացաւ ինչելիքենցիայի մեջ առանձին աղմուկ հանեցին ոմենավելուցիւները:

Այս յերեւյթների կողքով չեր կարող անտարեր անցնել ուստահայ եմիզրանտական ինտելիգենցիայի աչալուրջ մասը:

Ո՞վ և Գրիգոր Զալիսուշյանը:

—Հայկական Բորբիշե-Պուշկինը, յերեկվա աջ ոկտյաբրին հայտնի փաստաբանը!?

Վորոշ պարաւել կարելի յե գծել հեշտությամբ, վորովհետեւ Զալիսուշյանը յերեկվա հայ իրականության նույնպես մի շատ չափավոր հոսանքի ներկայացուցիչ, աջ հասարակական գործիչ և յեղել, և նույնպես բավական հայտնի փաստաբան...

Բայց մենք խուսափում ենք պարաւելներից, մանավանդ վոր մեր ձեռքի տակ չունենք բավական տվյալներ, համեմատություններ և հակագրություններ անելու:

Սակայն ավելորդ չե մի փոքր մոտից ծանոթանալու մեր Խորհրդային Հայսատանի յերեկվա թշնամու և այսորվա բարեկամի հետ, տեսնել այն բեկման անհունությունը, աներեակայելի թոփչքը, վոր իսկապես կատարվել և Զալիսուշյանի, անշուշտ նաև Զալիսուշյանների՝մեջ:

Հեղափոխությունների պատմությունները նման թոփչքների ու բեկումների պակաս ցայտուն որինակներ չեն տվել մեզ և այսակեղ անբնական, զարմանալու բան չկա:

1905 թվից հետո, յերբ ուստական առաջին հեղափոխության ակներև պարտությունը ստեղծում եր ուժերի նոր փոխհարաբերություններ և հարկագրում իրենց իդեալներից հնրաժարվող հասարակական բոլոր կենսունակ խավերին ձատել գիրքերը, և վորպես հետեանք՝ գասակարգային շերտավորումը մկուս եր շեշտվել ու խորանալ մինչ այն ուժեղ ակոսումից կարծես զերծ մնացած հայ իրականության մեջ, — հեռավոր Նոր-Նախիջևանից Անդրկովկաս և գալիս մի «հմայիչ», շատերին «նոր» թվացող լոգունգ:

— «Ազգովիճ գործենիք»...

Այդ հասարակական-քաղաքական ամեն ցավերից «փրկարար» լոգունգի զրոցակակիրներն եյին Ռուսովկնախիջևանի մի խումբ «Հայրենասերներ», տեղական անվանի փաստարաններ՝ Ստ. Մամիկոնյան, Գր. Զուրար, Գր. Զալիսուշյան և ուրիշները, վորոնց ամբողջ համակրությունը ուստական իրականության մեջ կագետիզմի, «պրոֆեսորների կուսակցության» կողմն եր: Յեկ պետք ե նկատել վոր այդ «ազգովիճն գործելու» լոգունգը ամբողջապես հյուսվել եր ուստական կադետիզմի որդան «Русские Ведомости»-ի ազգեցության տակ, վոր իր հերթին արդյունք եր միջազգային լիրերալ հոսանքի տարածման Ռուսաստանի տնտեսական եվլուցցիայի հետ զուգահեռաբար:

Ի՞նչ եր նշանակում Նոր-Նախիջևան, ժողովրդական մաս-



սաներից կտրված, հայ աշխատավորության մթնոլորտին խորթ «բարձր»-ինտելիգենտական խմբակի այդ լոգունը:

Առանց կարողանալու ճիշտ բնորոշել, գուցե հենց զիտակցաբար խուսափելով ծրագրային կոնկրետիզացիայից, թե վրունք են այն անմիջական նպատակները, վորոնց հետապնդում և Ստ. Մամիկոնյան և Ընկ. խմբակը հայ իրականության մեջ, նա «չափավորություն, զգուշություն և շրջանայեցողություն» քարոզելով՝ կարծես թե ասում եր շարունակ:—

— Թե ինչ ենք անում, ինչ ենք ուզում—չգիտենք. բայց ինչ ել անելու և ուզելու լինենք—բոլորս միասին, ազգովին անենք և ուզենք...

«Ազգովին գործելու» պլատֆորմայի կողմանկիցներն իրենք իրենց չեյին համարում վորեե դասակարգի հետ կապված, վորեե կուսակցության համակրող: Նրանք իրենք իրենց հորջորջում եյին անկուսակցականներ, բոլոր կուսակցություններից զուրա ու վեր, յեթե կուգեք՝ բոլոր կուսակցությունների հետ, վորովհետեւ իրենք իրենց կոչված եյին համարում կուսակցական-դասակարգային տարածայնությունները, ներհակությունները հաշտեցնելու իրենց մեջ, իրենց միջոցով:

Բայց յեթե մի կողմ թողնենք «ազգովին գործենք» սկզբ րունքի գեկարատիվ կողմը և մզուշապատ ամպերից իշեցնենք այդ «հայրենասիր» ինտելիգենտներին մինչև համառ փաստերը, ապա առաջին իսկ քայլափոխին կը տեսնենք, վոր այդքան «դյութիչ» խոսքերի տակ թափնված և յեղել շարունակ մի շատ հասարակ ու չափազանց շատ ել բուրժուական միտք; վոր այնքան վեասակար և յեղել դասակարգային պայքարի կողմնակիցներին ու ձեռնուու տերող դասակարգին, և վորը այնպիսի աջողությամբ կիրառեց վերջերս միջազգային բուրժուազիան համաշխարհային պատերազմի ժամանակ, հիմարացնելով դեղին ինտերնացիոնալի յիտեկից գնացող բանվորությանը:

«Ազգովին գործենք»—վոր ասել և մեր ժամանակակից տերմինոգիայով—դասակարգերի համագործակցություն, սուրուգ-եփչեսպո կլասսով, հայտնի բուրգՓերիզենք:

Ի հարկե, մեր Ստ. Մամիկոնյանը, Գր. Զալիսուշյանը և նմանները փրուն ճառերից հետո ամեն մի գործնական քայլում այնպես եյին ներկայացնում իրերի գրությունը, ինչպես և մեր ուստական կազետները, և այլ հետեւաքների չեյին համարում, քան մյուս բուրժուական գործիչները.—

— բացասական վերաբերմունք դեպի Հոկտեմբերյան հեղափոխությունը.

— Հայաստանի փրկությունը կարելի յէ գտնել միայն անկուսակցական կուսակցության, վոր նույն և թէ կադեսիզմի հաղթանակի մեջ.

— յերազում Ռուսաստանում կամավորականների (Դենիկինի), լավագույն զեպքում ուշբեգիկայի հաղթանակը.

— «Հեղափոխական», «սոցիալիստական», «նոր» և այլ Ռուսաստանի տակ ընավ յերբեք չենթաղրելով բոլցեվիկյան Ռուսաստանը, յեթե անզամ կասկածի տակ եր առնվում կամավորական Ռուսաստանի հաղթանակի կարելիությունն ու կարեորությունը:

Ահա մի յերկու խոսքով «ազգովին գործենք» հոսանքի ձըգտումները, Կրեպոն մեր անցած մոտակա իրականության մեջ, վորի փայլուն և հեղինակավոր զեմքն եր մի քանի ամիս առաջ թիֆլառում վախճանված Ստ. Մամիկոնյանը, և վորի վոչ պակաս աչքի ընկնող ներկայացուցիչն ե յեղել մեր հին, հայտնի «ազգային գործիչ», սպիտակ եմիգրացիայի ցուպը բռնած Գր. Զալիսուշյանը:

Յերեի շատերը հիշում են նրա կատաղի պայքարը բոլշեվիզմի դեմ: Շատերս անձամբ լսել ենք և մեզ նույնիսկ հիշեցնում եյին արդեն մեր ներկա հողվածի առաջին մասը կարգալուց հետո շատ պիկանտ վարիանտներ կոմմունիստների հասցեյին ուղղած նրա կծու քննադատություններից: Ծանոթ են մեզ և նրա «անհերքելի փաստերը», փաստաբանական պերճափությամբ ձևակերպված ֆիլիպպիկները Յերեանում ու Դենիկինի պատրաստի, գվորի առաջ, յերը վորպես գաշնակցական Հայաստանի ներկայացուցիչն նա «փշուր մը հաց» եր մուրում ցարական սատրապներից և վերջիններս նույնիսկ գրամով մերժում եյին. յերը Յերեան եր շատապում գաշնակցական քաղաքական գծի ինստրուկցիաներ ստանալու և զեկուցումներ անելու այն վարչապետներին, վարոնց «փայլուն վոչնչությունը» նա այնքան գեղեցիկ կերպով ընդգծում ե իր Ռումանիայում գրած բրոշյուրի մեջ:

Յեկ ենց այդ պատճառով ավելի արժեքավոր ու նշանակալից և զգաստացող ու զղացող հայ ազգային ինտելիգենցիայի համարակական պայքարում մարզված այդ խոշոր մտավորականի հրապարակային խոստովանությունը և անվախ ճանաչումը իր

սիալների. մանավանդ գիտակցումը՝ թե մանր ազգերի յեվ այդ բվում հայ ծողովրդի ազատքումը հեարտվօր և միայն սոցիալիստական-խորհրդային կարգերի հաղթանակի հետ և վոր մյուս բոլոր—նույնիսկ յերեկվա մեր լիբերալների կուռք «խելոք ու իմաստուն» Միլյուկովյան հիմնադիր ժողովի ուժիմի հաղթանակը կը վերածի Հայաստանը նորից մի խուլ անկյունի ու մոռացված ծայրագալառի:

Մենք յերբեք չենք պահանջել մեր ինտելիգենցիայից և այս որ ել չենք պահանջում զղացող ինտելիգենցիայից, վոր նա անմիջապես ու ամբողջապես ընդգրկեր կոմմունիստական իդեալը: Այդ շատ հաճախ անհատի ույժերից դուրս բան և և անհատական բարի ցանկություններից չի կախված:

Բայց մենք կարծես թե իրավունք ունենք պահանջելու, վոր այսքան փորձանքներից հետո,— փորձանքներ, վորոնք շատ թանգ նստեցին հայ աշխատավորության և վոչինչ դաշնակցական ջոշերին—մեր մոլորված ու դառնորեն խարված եմիզրանտական ինտելիգենցիայի շիտակ ու ազնիվ մասը գտնի իր մեջ ույժ— ինչպես Գր. Զալիսուշյանը— ճանաչելու անցյալի սխալները, չհամառելու հին սխալնաքների մեջ և շատպելու մեր ժողովրդին ծառայելու այն նոր ու անսման լայն ուղիներով, վորոնցից դուրս կարելի յե ծառայել միայն ժողովրդին թշնամի դասակարգին:

Թի ք լ ի ս.
1923—VIII.

ԶԼԶԱՅՈՂ ՀԱՅ ԻՆՏԵԼԻԳԵՆՑԸ

Խուսահայ ինտելիգենցիայի բաղդը շատ և նման Խորհրդացին Միության ինտելիգենցիայի բաղդին ընդհանրապես:

Ինչպես ամբողջ Խորհրդային Ֆեդերացիայի անթիվ ծայրերում, նույնպես և մեզ մոտ, սկզբում նա բռնեց յեթե չասենք պարզապես թշնամական, զոնէ ակնհայտ անբարյացակամ դիրք գեպի Հոկտեմբերը և նրա անդրադարձումը Անդրկովկասում, մասնավորապես Հայոստանում: Սակայն սխալ կը լիներ ու անարդարացի այստեղից յեղբակացնել թե մեր ինտելիգենցիայի այդ վերապահ զիրքը բղխում եր նրա բուրժուական ընույթից, — պայմանավորվում եր նրա սոցիալական ծագումով ու հականեղափոխական հակումով:

Հայ ինտելիգենցիան, — յեթե մի կողմ թողնենք Թիֆլիսի և Բագվի Փինանսական-նավթավին մագնատների հետ կապված ինսամեյացած մի բուռը ինտելիգենտ-սպեցներին, — իրը ամբողջուրացն՝ լայն աշխատավորական, յեթե կուզեք նույնիսկ գյուղացիական ծագումն ունի: Յեվ վորպես ցարական բռնակալության մնշված ու հալածված բազմաթիվ փոքր ազգություններից մեկի արհամարհված մտավորականություն՝ տրամադրված եր միշտ միանդամայն սպառզիցին, յեթե շայլություն կը համարվեր գործ ածել հեղափոխականունք բառը: Թեև վերջին տերմինը նույնպես սխալ չեր լինի:

Բնական և, վոր ամեն մի շարժում, վոր ուղղված եր թեթեւ գացնելու մանր ազգությունների— այդ թվում նաև հայ ժողովրդի— ստորացուցիչ կոցությունը և շեշտելու բռնադրակած ազգությունների անտեսված ինտելիգենցիայի կուլտուրական ֆակ-

տորությունը՝ անպայման ջերմ համակրական արձագանք պիտի գտներ նաև մեր մտավորականության լայն շերտերի սրտում:

Սակայն այդպես չպատահեց:

Ուստահայ ինտելիգենցիան պահ մի կարծես խրտնեց իր զիսին պայթած անցուղաբձից: Առանց քաշվելու հրապարակից, նա իրեն քաշված պահեց հրապարակում: Բավականացավ կրավորականությամբ:

Այս յերեսույթի պատճառերը բավական բարդ են և մեկից ավելի անգամներ վերլուծված, մանավանդ ուստաիան գրականության մեջ: Մենք նորից չենք դառնալու նրանց, մանավանդ վոր Գր. Զալիսուշյանի բրոշյուրի առիթով մասամբ ծանրացել ենք հայկական սմենավեխովոչինայի վրա:

Բայց մեզ թվում ե, թե ուստահայ ինտելիգենցիայի և խորհրդագյին իշխանության սկրնական «սառնությունը» հետեւանք եր, գուցե և մեծ չափով, այն հանգամանքի, վոր մեր ինտելիգենցիան, նրա լայն խավերը՝ հակառակ կոմմոնիստական (նախկին Ռուս. սոց.-զեմոկրատիայի) Կուսակցության տասնյակ տարիների ակտիվ գործունեյության արդյունաբերական կենտրոններում—անիբաղեկ եր բոլչեվիկուրյան, և մյուս կողմից՝ իրեն պարզ չեր պատկերացնում բանվորա-զյուղացիական իրավակարգի եյությունը,—ինչ շատ բնական եր նույնպես, վորովհետեւ վերջինս նորություն եր վհչ միայն հայ մտավորականության համար, այլև աննախընթաց՝ հեղաշրջումների պատմության մեջ:

Հարկավոր եր մի վորոշ ժամանակ միասին կենակցուրյան, վորպեսզի նախ ցրվեր օօմեցուցիչ տպավորությունը և հետո առորյա շփումով ու ամենորյա աննկատ աշխատանքների միջոցով յուրացվեյին խորհրդային իշխանության իսկական ժողովրդավարական-ազատագրական հիմունքները և նրա հեղափոխիչ, նույնիսկ մեր մտավորականության համար, սկզբունքները:

Ինտելիգենցիան աստիճանաբար, ավելի ու ավելի մոտից ծանոթանում եր նոր հասարակակարգի հետ և ինքն ել աստիճանաբար—հաճախ աննկատ ու հակառակ իր կանխակալ կարծիքի—փոխվում-ձուլվում եր բանվոր-զյուղացիական իրականության հետ: Այսոր այլևս խոսք անգամ չի կարող լինել—և նա ծիծառ կը շարժեր—մեր և հայ ինտելիգենցիայի փոխադարձ «անհասկացողության», «ոտարության», «խորթության», «սառնության»,

«անվատահության»,—ել չենք ասում «հակադրության» և «թշնամության» մասին:

Պետք ե անաչառությամբ արձանագրել մի փաստ ես, վոր հայ ինտելիգենցիան—խոսքս միշտ նրա աշխատավորական զանդովածի մասին ե—Խորհրդային ֆեդերացիայի բազմացեղ ու բազմալեզու մանր ազգությունների ինտելիգենցիայի մեջ առաջիններից մեկը հասկացավ իր սխալանքները և ճշտեց իր ընթացքը: Յեզ իր անձնվեր, հաճախ ծանր զլկանքների հետ կապված աշխատանքով ապացուցեց իր անվերապահ փարումը բանվոր-գյուղացիական իշխանության:

Ռուսահայ նախկին ինտելիգենցիայի գաղափարախոսների մեջ Լեռն անշուշտ վերջին դեմքերից չեւ։ Տասնյակ տարիներ, մանավանդ 90-ական թվականների վերջերից, Լեռն նկատելի դեր է կառարել մեր որագրության ու գրականության մեջ, վորոնք իրենց մեջ ելին արտացոլում ամբողջ հայ կյանքը, մանավանդ մինչ-հոկտեմբերյան իրավակարգում։

Այսպիս եր հականեղափոխական շրջանի հայ իրականության կազմությունը, վոր հայ խմբագիրը համարվում եր աշխարհիս ամենից խելոք ու կարող մարդը, իսկ նրա խմբագրատունը՝ ազգային մի ամբողջ ոջախ, անգամ յեր նրան զլուխ կանգնած եր լինում մի խղճուկ Տիգո կամ պահում եր «սալոն-վազոն» Թիֆլիսի բանուկ փողոցներից մեկի վրա։

Լեռն ամբողջապես անցյալ է։ Յեկ բնական ե, վոր անգամ հազար ինքը հարյուր բան յեկ եինք թվին մեր «Զակոնից» հրատարակական ընկերության ոգնությամբ տպագրված նրա դիրքը պիտի կրեր պատշաճավոր անուն։ —

— «Անցյալից»...

Յեսց այդպիս ել կոչվում է նա։

480 միջադիր յերեսից կաղմված մեր ժամանակների համար և մանավանդ հայերեն լեզվով այդ բավական հաստափոր հատուրը փորձում է պարփակել իր մեջ ոռուս-տաճկական պատերազմից (1877 թվից) մինչև գաշնակցական հականեղափոխությունը (Վրացյանի 1921 թվի փետրվարյան ավանդուրան), — այսինքն ավելի քան բառապուն տարգա անցյալ «հիշողություններ»։

Լեռն փորձում է պատմել վոչ միայն այն, ինչին ինքը ականատես-մասնակցող է յեղեւ այլև վերլուծել կամ, ինչպես ինքն և ասում՝ «լուսաբանել» ոռուսահայ և տաճկահայ զանգվածների դիմով անցած-դնացած քաղաքական - հասարակական մոտ կետ դարձա անց ու դարձը՝ իր բազմաթիվ ու բազմագույն յելեջներով։ Իր գիրքը նա սկսում է շատ հեռվից։ —

«Յես 17 տարեկան աշակերտ եյի Շուշու քաղաքային դըպ-րոցում, յերբ սկսվեց ոռուս-թուրքական պատերազմը (1877)։»

Յեկ թեև ընկ. Ա. Կարինյանը այդ գիրքը համարում է «Ենթի մեմուարները», բայց մեզ վրա այն տպագորությունն ե անում, թե կարդում ենք Լեռյի ստվարերես «Հայոց պատմության» իսոստացված վերջին - չորրորդ հատորի վերջին գլուխը, վորը անխուսափելիորեն պիտի ամփոփեր մինչ-հոկտեմբերյան հայ կյանքի վերջին կես գարե - թեկուզ Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածից մինչև Ալեքսանդրի դաշնագրությունը կամ Ղարսի համաձայնությունը։ Այդ տպագորությունը այնքան ավելի իրական է, վոր Լեռն այստեղ ել ինչպես և իր «Հայոց պատմության» մեջ, ցուցադրում է պատմագիտական անբավարար մոտեցում, ինչ շեշտել և նաև ընկ. Արտ. Կարինյանը գրքին կցված իր առաջարանում։

Լեռն գերազանցապես նարեատիվ մեթոդով էրար յետելից շարում ե իր հիշած կամ իրեն կարեոր թվացրդ պատմական գեպերը՝ հաճախ առանց աղբյուրները հիշելու։ Յեկ յեթի վորմեկ տեղ փորձում և վերլուծական փորձ, ապա ստացվում և մտքի լիրիքական այնպիսի գեղում և թեքում, վոր կամ վոչ մի կապ չունի պատմության հետ, կամ առնվազն պետք եր զոտել՝ անտեղի չինելու համար։ Ընդհանրապես սակավախոս ու սեղմ չն կեսի պատմագիտական տրամաբանությունը։

Մենք չենք մոտենա Լեռյի «Անցյալից» գրքին վորպես մեմուարների ամբողջապես։ Նա մեմուար և միայն մի կողմով, մեմուար - յերբ խռում ե մինչ-հոկտեմբերյան վերջին տասնամյակի և փեարփարյան հեղափոխությունից հետո մինչև Խորհրդացին Հայաստանի վերջնական հաստատումը Արարատյան գաշտում։ Բայց մյուս մասը կատարյալ պատմություն և - գրված հին իրավակարգի վորակված պատմագիրներից մեկի գրչով, և մենք պարտավոր ենք վորպես պատմական լուսաբանություն ել քննության առնել այն։

«Անցյալից» գիրքը վկայում է, վոր վերջին կես գարում այնքան կարեոր տեղ բռնող «հայկական եացի» մինչև նոր փուլի մեջ մտնելը համաշխարհային պատերազմի և Հոկտեմբերի հետեանքով՝ Լեռն գրեթե վոչ մի անձնական առնչություն չի ունեցել անգամ վորպես ժուրնալիստ, մեր հասարակական-քաղաքական կյանքի նշանագոր անցքերի հետ, կամ այդ առնչությու-

թյունը յեղել և այնքան հեռավոր ու անուղղակի (յերբեմն գավառական մի յետ ընկած քաղաքից, վորպիսին եր Շուշին), վորանձնական անմիջական տպավորությունները և հիշողությունները չելին կարող բավարար հիմք ծառայել, մանավանդ մի պատմաբանի, փոքր ի շատե արժեքավոր մեմուարներ գրելու:

Յեկ կեռն խուսափում ե ինքը իր «Անցյալից»-ը մեմուարներ անվանելու: Նա հաճությամբ գործ և ածում և կրկնում մի քանի անգամ լուսաբանություն տերմինը—և այդ ավելի համապատասխան և զրքի բովանդակության—ու փորձում ե շարունակ ցուցադրել պատմաբանի մոտեցում արժարժված հարցերին:

Մենք այդպես ել կանենք: Կը խոսենք կեռյի աշխատության մասին նախ՝ վորպես պատմական լուսաբանության և հետո՝ վորպես մասամբ հոււերի:

Թե մեկ և թե մյուս հարցերը արժանի յեն քննության և չեն կարող վրիպել մեր ուշադրությունից:

||.

Հայկական հարցը այն զլիսավոր առանցքն եր, վորի շուրջը պտաել և հայ կյանքը վերջին ավելի քան կես գար:

Կրոնական-յեկեղեցական թե ազգային-հասարակական խընդիրներին Պոլսի պատրիարքարքարնի և Եջմիածնի վեհարանի շուրջը համախմբված հոսանքները—պահպանողական, լիւրերաւ դաշնակցական, սոցիալիստակայնական,—բոլորն ել անխտիր մոտեցել են այդ հարցի «նպատակահարմար» լուծման հեռանկարներով: Հասարակական շերտավորությունները և բաղխումները կատարվել են այդ հարցի շուրջը և առիթով:

Միայն 90-ական թվականների վերջերից և 900-ականի սկզբներից Ռուսաստանի Կոմունիստական (այն ժամանակները Ռուսաստանի Սոց.-Դեմոկրատ Բանվորական) Կուսակցությունն եր, վոր մտցնում եր ազգայինչիների ականջին անախորժ գիւտնեանը, «աններդաշնակությունը», շատ պարզ ու վորոշ գիրք բռնելով դեպի այդ հարցը, վորը գերազանցապես ազգային քաղաքականության խնդիր լինելով, մեզ մոտ այն ժամանակները մասնավորապես տանկահայկական կամ Տանկահայաստանի հարց եր:

Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատների—Ստեփան Շահումյանի, Քողդան Գնունյանի, Սուրեն Սպանդարյանի, Արշակ Զռհրաբյանի համար տաճկահայկական հարցը առանձին չեր դրվում: Նա համարվում եր Տաճկաստանի հերթին գործ, վոր կարող եր բարեհաջող լուծվել միայն ընդհանուր—այդ յերկում ապրող բոլոր ժողովուրդների ջանքերով կերտաված հեղափոխության զարգացումով Անտառիայում: Իսկ Ռուսաստանի մանր ազգությունների բաղզը մեր ընկերները համարում եյին սերտորեն կապված Ռուսաստանի պրոլետարական շարժման հաղթանակի հետ:

Բայց յեթե մի կողմը թողնենք մեր կուսակցությունը, — վորը հայ իրականության մեջ ասպարեզ իջնելու հենց առաջին որվանից ընդգրկեց ազգային քաղաքականության այն սկզբունք-

ները, վորոնք հետագայում ավելի պարզ և վորոշ ձևակերպվեցին մեր մի շարք բանաձեւում, — գործող մյուս բոլոր հոսանքները, խմբագրումները, կուսակցությունները «հայկական հարցի» հանդեպ զրավել եյին յերկու իրար հակադիր դիրք:

Այսպես, այդ յերկու զլիավոր կողմերից մեկը համարում եր, թե չպետք է հարուցել վորու հարց Տաճկահայաստանում, վորովնետե «հայերը յեթե վոչ բարեկեցիկ, համենայն դեպու տանելի վեճակի մեջ են մայր յերկում», իսկ Պոլսում նույնիսկ շոյված սուլթանական արքունիքից, վորտեղ ազգեցիկ պետական սկաշտուններ ունեն: Այդպես մատադողները նկատում եյին, թե գժկոհելով սուլթանների դեմ կամ բողոքելով Յելբոպային՝ միայն կը գրգռենք Արդուլ-Համբուներին: Նրանք հանձնարարում եյին «համակերպման զգույշ քաղաքականությունը»:

Այսպես եյին մտածում Սան-Ստեֆանոյի և Բերլինի 16 և 61 հոդվածների որդիանից առաջ ու հետո «Մեղու»-ն, «Նոր-Դար»-ը, «Արձագանք»-ը, մինչ-առաջին սուսակ. հեղափոխության իրավակարդի խոշորագույն ներկայացուցիչները մեզանում՝ Պետրոս Սիմեոնյան, Սպանդար Սպանդարյան, Արգար Հովհաննիսյան, Կառապետ Յեղյան, Գեորգ Յեղանագույան, Սանասարյան, Գեորգ Արիմյան, Միասք Արամյան, Ար. Քիշմիշյան, Սուլյան, Յեղիշ Գեղամյան և այլն և այլն, մի խոսքով մեր բուն պահպանողականությունը: Հենց այդ համակերպման քաղաքականության տիպիկ ներկայացուցիչն եր Լեոյի հիշած Աշրդյան պատրիարքը, իսկ հետագայում (Որմանյանը*): Այս հոսանքի համար ընդհանրապես հայկական հարց գոյություն չուներ և համարվում եր վասնդափոր ու ֆլամակար: Նրան բավարարում եր յեկեղեցական ավտոնոմիան կամ «Ազգային սահմանադրությունը»: Հայը պարզապես հպատակ եր սուլթանի և վատ չեր ապրում նրա բարձր հովանու տակ:

Պետք է նկատել նույնպես, վոր պահպանողականությունը մեզանում ուներ պարզապես տանկարան-միապետական-սուլթանական ուժինացիք: Նա համարում եր «հայության շահերի»

*) «Արմենիա»-ի իմբագիր Մկրտիչ Փորթուգալյանը 90-ական թվականներին նույնական համակերպման չերմ կողմանից եր և զեմ «հեղափոխական ավանդությաների»: Մենք ունենք մի քանի անժիպ դոկումենտներ—դանուներ այդ մասին, վորոնց մասին կը խոսենք մի այլ տեղ և անդամ:

տեսակետից ավելի շահավետ «թույլ» Տաճկաստանի՝ քան ուժեղ թուսաստանի թաթը: Մի տերը գերադասելի տասը տիրոջից.— խոսքը պարլամենտական սահմանադրության մասին եր:

Մեր բուրժուազիայի յերկրորդ, յերիտասարդ ու վճռ-պակաս ազգեցիկ թեր վճռականորեն գտնում եր, թե հասել և բարեպատեհ ժամը դարձանից զուրս գալու և ստեղծելու «Հայկական բոլղարիա» Փոքր-Սախայի սրտում: Այդ լիբերալ բուրժուազիան իր գործունեյության իմաստը գտնում եր ամեն ներելի ու աններելի միջոցներով,— թեկուզ գործակցելով ու ծախվելով սուլթանների բոնակալության հետ մրցող ցարական բոնակալությանը.—

— «Տեսնել Մասիսի գլխին հայ դրոշակ»...

Նրա գործելակերպն եր: —

— «ապստամբություն»—աղերսագիր,

— «ցուցյ»—ավանտյուրա,

— «ղինված դիմադրություն»—կոտորած,

— «հեղափոխություն»—մուլացկանություն և այլն:

Սան-Ստեֆանոյի և Բերլինի 16-րդ և 61-րդ հոդվածները խմբագրվել ու արձանագրվել են հայ լիբերալիզմի գրչով, վորի ականավոր ներկայացուցիչն եր հենց մեր «Անցյալից» զբքի հեղինակի ուսուցիչ Գրիգոր Արծրունին, վորը նույնիսկ իր մահվան մահճակալի վրա 1892-ի դեկտեմբերին նախվ անհամբերությամբ ու Արծրունուն հատուկ յերեխայական վոգերությամբ սպասում եր, Սիմոն Շերունու պես հանգիստ հանգչելու համար, մի «վերջին լուրի»: —

— «արդյոք ցարը հաստատե՞լ և կաթողիկոս Խրիմյանին»...

այդ սարսափելի «հեղափոխականին», վորը խոստանում եր իր

— «բութ մատով ոծել հայոց թագավոր»...

Իսկապես վոր յերեխայական մտայնություն՝ ինչպես կասեր կեռն:

Դաշնակցականիզմը արձրունյան լիբերալիզմի հետագա ետապն եր միայն: «Բողոքի» և մուրացկանության գործելակերպը այնուհետեւ շատ ավելի շեշտվեց ու ծավալվեց, ստացավ համալարասահնող չափեր:

Զերկարենք ավելի պահպանողական և լիբերալ հոսանքների գիրքերի, նրանց պայքարի յելմեջների մասին, մանավանդ վոր ժամանակը սուզ և կ խնդիրը պարզ, ակնհայտնի: Հայկական

հարցի հանդեպ մեր բուրժուազիայի ներսում գոյություն ունեցող պիտակոր շերտավորումները գեռ բոլորովին չեն մոռացված մեզանում և բավական հանրածանոթ են:

Արդ ում հետո և իր «Անցյալից» գրքում կեռն. —

— Արձրունու, Քրիստովոր Միքայելյանի, Սիմոն Զավարյանի, Ներսես Վարժապետյանի, Խրիմյանի, Իզմիրլյանի, Սամսոն Հարությունյանի, Ալեքսանդր Խատիսյանի, բժ. Զավրիելի, Մեսրոպ Վարդապետի,

թէ —

— Պետրոս Սիմեոնյանի, Սպանդար Սպանդարյանի, Արգար Հովհաննիսյանի, Մակարի, Աշրգյանի, Որմանյանի:

Վարձր գործելակերպն և թեկուղ յետին թվով ու «հայի վերջին լիելքով» արդարացնում այսոր կեն. —

Համակերպման — կոնսերվատի^Հփ,

թէ —

Բմբոսացումի — լիբերալ:

Առանց տատանումի կեռն — Փորպես պատմաբան — իր «Անցյալից» գրքի բոլոր 480 յերեսների վրա և բոլոր ութը գլուխներում, վորոնք զանազան վերտառությունն են կրում՝ բայց շարունակ նույն խնդիրն են կրկնում — անվերապահ ու ջերմ տողերով խարազանում և հայկական լիբերալիզմի դիրքերը և պատրարքում հայկական պահպանողական խրամատներում:

Հայ լիբերալիզմի (այդ բառիս լայն իմաստով՝ վոր իր մեջ անխուսափելիորեն պետք է ընդդրկի նաև մանր-բուրժուազիան դաշնակցականիզմը) տասնյակ տարիներ փայփայած «հայկական հարցը» կերպով առանում է վորպես մի հեեւավոր պատմագիտա, վորի պատասխանաւոլության իր բաժնից չի ուղում խուսափել և չի կարող խուսափել՝ չափից ավելի համեստ ու պասսիվ գեր իրն նիրառանող կեռն:

Լեռի այսորվան յեղբակացությունը — մեզ վազուց հայտնի Շահնումյանի, Գնունյանի, Սուրեն Սպանդարյանի, Արշակ Զոհրաբյանի պայքարից — ճիշտ է:

«Հայկական հարցը» — պարզապես ու իսկապես մի պրովացիա յեր, սառնորեն ծրագրված և Դաշնակցության ջերմ ոգնությամբ իրականացած սկզբում արևմտահայ, հետագայում նաև սուսահայ աշխատավորության հանդեպ: Կասկածից զուրս և և աղացուցվածից ավելի աղացուցված, վոր «Մշակ — Դրոշակ»-ի մո-

տեցումը հեղափոխության ու մանր ազգերի ազատագրմանը 19-րդ դարի վերջին քառորդից արդեն միանգամայն աններելի ոռմանտիկ, ուսուպիստական, յերեխայական — ինչպես շարունակ կրկնում և կեռն իր գրքում — և մանավանդ ափանցուրփատական պրովոկացիոն բնույթ եր կրում: Արձրունու — Քր. Միքայելամանի, Խ. Մալումյանի — Ա. Զավարյանի գործունեցությունը և գործելակերպը չեյին կարող տալ ուրիշ ավելի բաղզավոր արդյունքներ թեկուզ միայն այն պատճառով, վոր «հայկական հարցում» վերը հիշած հոսանքները և գործիչները կույր գործիք եյին, իսկ պարտ հաճախ ել ուղղակի գիտակալեր սկզբում ցարականի հետագայում ամրող յեվրոպական խարդախ դիվանագիտառության, յերբ Սան-Ստեֆանոյի 16 թիվը Բերլինում սկսեց յետեկից առաջ հոլովել ու դարձավ 61:

Բայց պատմական իրականությունը մնալով անջնջելի փաստ, — մենք չենք կարող միանալ պատմաբան Լեսի մոտեցումին գեղի արձարձգած խնդիրները:

Մի յերկրի, ներկա գեղքում Տաճկաստանի, հասարակական քաղաքական շարժումները պահանջում են շատ ավելի բազմակողմանի և լուրջ պատմական լուսաբանություն, քան տրված և «Անցյալից» գրքում, քան կարող ել լինել մի զգացված ու պատաված որտի զեղում:

Պատմաբան Լեռն հետապնդում և պատմական ճշմարտություն: Նա կարիք է զգում խոստովանել իր և ուրիշի պատմական սիմվոլները: Յեվ ահա նրա խոստովանությունը և ճշմարտությունը բերում են նրան այն յեղբակացության, թե «ազգը» փրկված կը լիներ, յեթե հետեւ համակերպման և վոչ թե բռներ հեղափոխության ուղին:

Այդպիսի սեմպլիստ պատասխանը սխալ կը լիներ:

Մի բան պարզ պիտի լինի, վոր Տաճկաստանում ընդհանրապես հեղափոխական շարժումը անխուսափելի յեր և բնականարար ըմբոստացումի գորակված կրողները պիտի լինեյին — ինչպես մեզանում Ռուսաստանում եր — առաջին հերթին ազգային Փոքրաբանական աշխատավորական շախմատը, վորոնց ճնշումը և շահագործումը կրկնակի բնույթ եր կրում, ուրեմն և կը ըստակի թվալի: Մասնավորապես հայ մասսաները (ինչպես նաև հույն և քյուրղ) կարող եյին աղատվել հետագա արհավիրքներից ու աղացայուրաներից Տաճկաստանի հեղափոխական-աշխատա-

զորական շարժման աստիճանական ծավալումով և անբռնազբուսիկ զարգացումով, և վոչ թե պահպանողական անվերջ համակերպումով սուլթանական բոնակալության կամ լիբերալ-դաշնակցական ազգայնամոլ միջամտությամբ—բոլղարական գործելակերպով:

ՀԵՂԱԿՅԱՆ-ԴԱՏԵՆԱԿՑԱԿԱՆ ՎՈՅԵՒՐԸ ԿԱՅԱՆՈՒՄ Ե ՆՐԱՆՈՒՄ, վոր նրանք—ինչպես ասում են—**ՇՈՐՄԻՐԱՎԱԼԻ շարժումը և մեկուսացրին** արևմտահայ գյուղացիությունը՝ տալով նրան ազգային-շովինիստական բնույթ, ստեղծելով առանձին «հայկական հարց», վոր ասել ե հայ-թյուրքական հարց կամ հյաստարախ:

Այդ անորակելի վոճիրը կրկնապատկում եր նրանով, վոր նրանք ծառա, եցրին դեռ անգիտակ հայ զանգվածներն ու ծախեցին հեղափոխության ու ժողովրդի շահերը ստար բուրդուազիայի նպատակներին, մատնեցին անվերապահորեն յեվրոպական դիվանագիտության ու առաջին հերթին ցարական վոստիկանական պետության շահերին:

Դեռ հեղափոխական շարժման արշալույսին—ինչպես մեզանում, նույնպես և Տաճկաստանում—յերբ դեռ կատարված ելին Գում-Գափուի յեվ Բանկ-Ռոտոմանի նման տղայամտությունները միայն, վորոնց եռացրած (ոռու դիվանագիտների խոսքն և այս, վոր բերում ե Լեռն իր գրքում) հերոսների ականջներից րոնած ցարական դեսպանության գործակալը ապահովաբար յեվրոպական նախը եր նախացնում,—ահա շարժման դեռ այդ սկզբնական շրջանում՝ միջազգային պրոլետարական շարժման մեջ մարդկան ընկերները—Շահումյան, Գնունյան, Սուրեն Սպանդարյան, Արշակ Զոհրաբյան—հախազգութացնում ելին հայ բանվորի և գյուղացու դեմ սառնորեն ծրագրվող դավադրությունից ու զավաճանությունից:

Հեղափոխական շարժումը Տաճկաստանի ազգային փոքրամասնությունների մեջ չեր կարելի կասեցնել ամիրանների ու ազգային ջողների անծայր շողոքորթություններով և վոչ ել սուլթանական «մեծահոգությամբ»: Բայց նա չեր վերածվի դաշնակցական ավանայուրիզմի յեվ կոշմարային կոտորածի, յեթե հաղթանակած լինելին մեր աննման Ստեփանի ու Սուրենի, Բողոքանի և Արշակի զաղափարները:

Այս չե ասում մեզ պատմաբան Լեռն. բայց այս և ասելու մեզ բոլցիկյան պատմական լուսաբանությունը անցյալի:

III.

ՄԵՆՔ ՄԵԽԱՆՔ, ՎՈՐ ՊԱՄԱՄԱՐԱՆ ԼԵՐՋԻ «ՊԱՏՄԱԿԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԵՐԸ»—ի դեպ, վերին աստիճանի ծեծված և տարածված մինչ-հոկտեմբերյան շրջաններում և նույնչափ ել խախուտ, — մեզ վոչ մի զեպքում և վոչ մի կերպ չեն կարող բավարարել: Շատ ավելի հետաքրքրական են «Անցյալից» գրքի մեմուարային հատվածները, վորոնք ցրված են գլխավորապես գրքի վերջին գլուխներում: Յայց նրանց անցնելուց առաջ պարզենք մի հարց,

— Ո՞վ և հեղինակը, ինքը Լեռն.

Այս տարորինակ թվացոյ հարցը մենք դնում ենք, վորովհետեւ նա զրված և այդ գրքում և զրված կրկնակի անդամ: մեկ՝ ընկ. Արտ. Կարինյանի հառաջարանում և յերկուորդ՝ և առ ավելի յե կարեոր—հենց իրեն՝ պատմաբան հեղինակի կողմից:

Լեռն ինքն իրեն առանձին բավականությամբ համարում է կուսակցություններից զուր գրչի մշակ և ընկ. Արտ. Կարինյան ել վատահում և նման ինքնահանձնաբարութիւնների: Ընկ. Արտաշեսը նույնիսկ փորձում է հիմնավորել այդ հայտարարումը— ինչ դժվար եր անել հեղինակի համար— Լեռյի աշխատություններով:

Հասկանալի յե ուրիմն ու անխուսափելի, վոր մենք պետք ե պարզենք նախ և առաջ Լեռյի հասարակական-քաղաքական ֆիզիոնոմիան, վորպեսի նրա գրքի մեմուարային մասից չհանդինք սիստեմակացությունների:

Ուշիմ ընթերցողը—յեթե անգամ հետեած ու տեղյակ չինի լեռյի հրապարակախոսական գործունեյությանը լիբերալ-դաշնակցական հայ որպագրության մեջ—հենց միայն «Անցյալից» գրքից կը քաղի բազմաթիվ վկայություններ, թե մեր պատմարանը անցյալում հարել ե հայ իրականության շատ փորոշ հոսանքի: Այսպես, նկարագրելով յետ ընկած հայ գավառական քաղաք Շուշիի ապրումները ուսւածկական պատերազմից հետո հաջորդող սուածին տասնամյակում, Լեռն նկատում ե, վոր արդեն այդ հեռավոր ժամանակները գոյություն ուներ Շուշում յերիտասարդա-

կան, թեկուղ վոչ-ակտիվ խմբակը վորը հարում եր արծրունյան մշակականիզմին կամ հետագա դաշնակցականիզմին, և վոր այլ անակտիվ խմբակի ամենից ակտիվ անդամը (այս ժամանակների հասկացողությամբ) հենց ինքը՝ մեր գրքի հեղինակն ե յեղեւ Շուշում: Նա յե պահպանում կապը կենարոնի—թիֆլոսի հետ, նայե ժողովաբարություններ անում հարկափոր գեպքում, նրան են դիմում Շուշի այցելող «հեղափոխականները», նրա հետ են խորհրդակցում և հաշվի առնում Արծրունու թաղման ժամանակ Սիմոն Զավարյանը և Քրիստափոր Միքայելյանը, և այլն, և այլն:

Այս ժամանակների գործիչների տիպիկ «գործունելության» տիպիկ պատկեր:

